ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «05» 12 2016թ. N 1180-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 26-Ի N 45-Ա ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2016 թվականի հունվարի 26-ի «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության կողմից իրականացվող 2016 թվականի պետական բյուջեի միջոցներով ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում կատարված աշխատանքների ընդունման ոլորտային հանձնաժողովներ ստեղծելու մասին» N 45-Ա հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի N 1 Հավելվածով հաստատված Ցանկի 1.1 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1.1	«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին»	152600,0	Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վարչություն	Տ. Խաչատրյան

2) Հրամանի N 1 Հավելվածով հաստատված Ցանկի 2.1 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2.1	«Զբոսաշրջության աջակցության ծառայություններ»	185700,0	Զբոսաշրջության պետական կոմիտե	Զ. Զեյթունցյան

3) Հրամանի N 1 Հավելվածով հաստատված Ցանկի 2.2 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

2.2	Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիր	16908,4	Ներդրումային քաղաքականության վարչություն	Հ. Ազիզյան

4) Հրամանի N 1 Հավելվածով հաստատված Ցանկի 3.1 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3.1	«ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցություն»	475000,0	Արդյունաբերության զարգացման վարչություն	Տ. Խաչատրյան

5) Հրամանի N 2 Հավելվածի 1.1 և 3. կետերում «Հ. Հովհաննիսյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ» բառերը փոխարինել «Տ. Խաչատրյան - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ» բառերով,

6) Հրամանի N 2 Հավելվածի 2.1 կետում «Գ. Մելքոնյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ, հանձնաժողովի նախագահ» բառերը փոխարինել «Զ. Զեյթունցյան - Զբոսաշրջության պետական կոմիտեի նախագահ, հանձնաժողովի նախագահ» բառերով,

7) Հրամանի N 2 Հավելվածի 2.2 կետում «Գ. Մելքոնյան - ՀՀ էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ, հանձնաժողովի նախագահ» բառերը փոխարինել «Հ. Ազիզյան - ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ» բառերով:

/ ՍՈՒՐԵՆ ԿԱՐԱՅԱՆ